

ՀՀ Լոռու մարզի
Սպիտակ համայնքի ղեկավար
պարոն Բ. Նիկողոսյանին
նույն համայնքի բնակիչ
Մացակ Մուկուչի Մելոյանից
Հեռախոս՝ 094 88 58 20
ՀԾՀ՝ 3101500257

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ Ձեզ տրամադրել հասցե ըստ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ԼԴ 4/0033/02/23 քաղաքացիական գործի 2024 թվականի հուլիսի 22-ի վճռի իմ սեփականություն ճանաչված, Սպիտակ քաղաքի Ս.Ավետիսյան հրապարակ, թիվ 2 բազմաբնակարան շենքի առաջին հարկում գտնվող 28 քառակուսի մետր մակերեսով ոչ բնակելի տարածքին:

Կանխավ շնորհակալություն:

Ներկայացվող փաստաթղթերի ցանկ՝

№	Փաստաթղթի անվանումը	Կցված է (կատարվում է/✓ նշում)
1.	Դիմում՝ լրացված սահմանված ձևով	✓
2.	Դիմումատու իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենը, ՀՎՀՀ, բանկային վավերապայմաններ	-
3.	Դիմումատու քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի պատճեն	✓
4.	Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռի պատճեն	✓
5.	Հասցեավորման նպատակով կատարված վճարման անդորրագիր	✓
6.	Պայմանագրի պատճեն	✓
7.	Անշարժ գույքի հատակագիծ	✓
8.	Սոց. քարտի պատճեն	✓
9.	Այլ	-

Դիմումատու՝



(ստորագրություն)

Մացակ Մելոյան
(դիմումատուի անուն, ազգանուն)

09 09 2024թ.



Անդորրագիր N

43

09/09/2024

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՍՊԻՏԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՎճԱՐՈՂ 99

Մեկոյան Մացակ
94885820

Բանկ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՍՊԻՏԱԿ» ՄԱՍ

Սոցապ N

ԴԵԲԵՏ

ԳՈՒՄԱՐ

16317	1011006	1011	800.00
ԿՐԵԴԻՏ			AMD
90024	5161162		100
Փոխարժեքով			900.00
			AMD

ՍՏԱՅՈՂ՝ ՀՀ ՖՆ

Բանկ՝ Սպիտակի տեղ. գանձ. բաժանմունք

Գուժարը տառերով Ինը հարյուր ՀՀ դրամ

Վճարման նպատակը՝

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ Հասցեավորում

1

Փոխարժեքով

Ներկայացվել է՝



Մտք. 09/09/2024 10:29:5

Տպգ. 09/09/2024 10:29:5

Հսկիչ

Հաշվապահ

Գանձապահ

4

THIS PASSPORT IS VALID FOR FOREIGN COUNTRIES UNTIL



PT

TRIP OBSERVATIONS

*Mr. & Mrs. [illegible]
[illegible]
[illegible]*



PT

410003101



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏՅՈՒՄԱԿԱՆ ԱԳՆԱԳՈՒԹՅԱՆ ԶՄՏ

3101500257



Ազգանունը

ՄԵԼՈՅԱՆ

Տրամադրված է

Անունը

ՄՄՏԱԿ

23 / 03 / 2005

Հայրանունը

ՍՈՒԿՈՒԶԻ

Քիմը

ՄՆՁՄԱԳԻՐ --

AC0221773

Հ. Սարգսյան ք. Սպիտակ

«22» 04 2002թ.

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Սպիտակի քաղաքապետարանի բնակֆոնդի բաժնի վարիչ Հ. Մխիթարյանը (այսուհետև՝
Վարձատու) մի կողմից, մյուս կողմից Սպիտակ քաղաքի բնակիչ (այսուհետև՝ Վարձակալ)
Վահագն Եսայան անձնագիր HC 0221773 տրված 23.06.1998
Սպիտակի Ն.Գ. Բաժանմունքի կողմից, կնքում են սույն վարձակալական պայմանագիրը հետևյալի
մասին:

1. Վարձակալության պայմանագրի առարկան

Վարձակալության պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի
ժամանակավոր տիրապետմանը և /կամ/ օգտագործմանը հանձնել գույք, շենքեր, շինություններ:

1.1 Վարձակալը դիմել է Սպիտակի քաղաքապետարան սպասարկման սրահ, նկուղ և այլն
օգտագործելու նպատակով տարածք հատկացնելու խնդրանքով:

1.2 Վարձատուն Վարձակալին է հատկացնում 28 ք. մ մակերեսով տարածք
Վ. Վահագն Եսայան հարողի վրա կառուցված շենքի ոչ բնակելի տարածքից:
/ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 608 հոդվածի կարգով/:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Վարձատուն Վարձակալին է հանձնում վերը նշված տարածքը առանց ներքին և արտաքին
հարդարման աշխատանքների:

2.2 Վարձակալը պարտավորվում է հարդարման աշխատանքները կատարել սեփական ուժերով,
չփոխել նախագծային պրոֆիլը, ավարտել 6 ամսյա ժամկետում, տարածքը օգտագործել
նպատակին խիստ համապատասխան, այլ նպատակի օգտագործելու դեպքում Վարձատուին
իրավունք է վերապահվում պայմանագիրը լուծարելու:

3. Վարձավճար

3.1 Վարձակալը պարտավոր է ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար վճարը
/վարձավճար/ :

3.2 Սույն վարձակալական պայմանագրի առարկայի սակագինը 1 ք. մ դիմաց կազմում է 20 /քսան/
ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Հաշվարկ ըստ վարձակալական պայմանագրի

ա/ հարկային և անվտանգ 240 ԳՏ Տեղեկատվական կառույցի գրասենյակ

ընդամենը: Իրանյան Կ. Կ.

- 3.3 Վարձավճարի չափը կարող է փոփոխել կողմերի համաձայնությամբ պայմանագրով նախատեսված ժամկետներում:
- 3.4 Վարձակալը պարտավոր է վարձավճարի ընդհանուր գումարը վճարել պայմանագրի հաստատելուց հետո 3 ամսյա ժամկետում:
- 3.5 Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետի խախտման դեպքում Վարձատուի իրավունք ունի վարձակալական պայմանագիրը համարել ուժը կորցրած, նրան չհաստատելով կատարած հարդարման աշխատանքների դիմաց:

4. Վարձակալած գույք գները

- 4.1 Վարձակալական պայմանագրով նախատեսվում է, որ վարձակալած գույքը, վարձակալության ժամկետը լրանալուց հետո կամ մինչև դրա լրանալը, անցնում է Վարձակալի սեփականությանը Վարձակալի կողմից պայմանագրով պայմանավորված ամբողջ գումարը վճարելու դեպքում:
/ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 627 հոդվածի կարգով/:

5. Վարձակալական պայմանագրի ուժի մեջ մտնելը

- 5.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրելուց և քաղաքացիական կողմից հաստատվելու օրվանից:
- 5.2 Պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման վարձակալի ուժեղով:

6. Կողմերի միջև վեճերի լուծման կարգը

- 6.1 Կողմերի միջև ծագող վեճերը լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

7. Կողմերի իրավաբանական հասցեները

«Վարձատու»

Սպիտակի քաղաքապետարանի
բնակֆոնդի բաժնի վարիչ՝
Մ. Մխիթարյան
Հ. Մխիթարյան
Հայագրորանկի Սպիտակի
բաժանմունք
ՀՀ 900245161162

«Վարձակալ»

Սպիտակ քաղաքի
Ն. Ջառնջյան փողոցի
49 տան բնակիչ
Ն. Ջառնջյան
անուն, ազգանուն, հայրանուն
Մ. Մխիթարյան
նոտարագրություն



Վ Ճ Ի Ռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան)

*նախագահությամբ՝ դատավոր
քարտուղարությամբ՝
մասնակցությամբ՝
հայցվորի ներկայացուցիչ՝*

Ե. ԱՌԱՔԵԼՅԱՆԻ

Ա. Պապոյանի

Վիկտորյա Ալեքսանյանի

19 «հունիսի» 2024թ.

ք. Վանաձոր

Դոնրաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ Մացակ Մուկուչի Մելոյանն (անձնագիր՝ AN 0509030, տրված 11.06.2013թ. 052-ի կողմից) ընդդեմ ՀՀ կառավարության, երրորդ անձ՝ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնք՝ գույքը տիրագործի ճանաչելու և ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի վերաբերյալ:

ՊԱՐՁԵՑ



Գործի դատավարական նախապատմությունը.

Մացակ Մուկուչի Մելոյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ կառավարության, երրորդ անձ՝ Սպիտակ համայնք՝ գույքը տիրագործի ճանաչելու և ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի վերաբերյալ:

Հայցադիմումը Դատարանում ստացվել է 28.04.2023թ., դատավորի աշխատակազմին հանձնվել է 03.05.2023թ.:

Դատարանի 15.05.2023թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի 16.06.2023թ. որոշմամբ 02.08.2023թ. հրավիրվել է նախնական դատական նիստ:

Դատարանի կողմից 02.08.2023թ. կայացվել է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում:

Պատասխանողի ներկայացուցիչ Ա. Սահակյանի կողմից 31.01.2024թ. ներկայացվել է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը փոփոխելու վերաբերյալ միջնորդություն:

Դատարանի կողմից 31.01.2024թ. որոշում է կայացվել ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը փոփոխելու մասին:

Դատարանի կողմից 03.04.2024թ. կայացվել է նախնական դատական նիստն ավարտելու և գործը դատաքննության նշանակելու մասին որոշում:

29.05.2024թ. գործի քննությունը համարվել է ավարտված և հայտարարվել է դատական ակտի հրապարակման օր՝ 19.06.2024թ.:

Հայցվորի դիրքորոշման հակիրճ բովանդակությունը.

Դիմելով դատարան հայցվորի ներկայացուցիչը հայտնել է, որ Սպիտակ քաղաքի Սպանդարյան փողոցի (ներկայումս Հրապարակ) վրա գտնվող, 240 քմ մակերեսով հողամասի վրա կառուցված խանութ-տաղավարը պատկանել է Սպիտակի շրջկոտային:

Հայկոռայի՝ 16.12.1991թ. թիվ 3-38 գրավոր թույլտվության հիման վրա, Սպիտակի շրջկոտայի լիազորների ժողովի որոշմամբ վերը նշված խանութ-տաղավարը 860 օտրվի արժեքով վաճառվել է Մացակ Մուկուչի Մելոյանին:

27.12.1991թ. հայցվորը վճարել է նշված խանութ-տաղավարի արժեքը:

22.04.2002թ. Սպիտակի քաղաքապետարանի բնակիչների բաժնի վարիչի և հայցվորի միջև կնքվել և Սպիտակի քաղաքապետի կողմից հաստատվել է պայմանագիր, որի 1.2 կետով սահմանվել է, որ վարձատուն վարձակալին է հատկացնում 28 քմ մակերեսով տարածք Ս. Ավետիսյան հրապարակի վրա կառուցված շենքի ոչ բնակելի տարածքից, իսկ 3.2 կետով սահմանվել է, որ տարածքը հատկացվում է անվճար 240 քմ մակերեսով խանութ-տաղավարի իրացման դիմաց:

10.10.2022թ. հայցվորը դիմում է ներկայացրել ՀՀ Լոռու մարզպետին՝ խնդրելով թույլատրել վերը նշված տարածքի նկատմամբ կատարել պետական գրանցում:

ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարի 13.10.2022թ. թիվ 034/28-3218 գրությամբ հայցվորին հայտնվել է, որ Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան հրապարակ թիվ 2 հասցեի շենքը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը:

Նշված վկայականի համաձայն՝ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան հրապարակի թիվ 2 բազմաբնակարան բնակելի շենքի նկատմամբ 25.06.2008թ. գրանցվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը:

Նշված 28 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը հայցվորին է տրամադրվել առանց ներքին և արտաքին հարդարման, հայցվորն այն ամբողջությամբ վերանորոգել է և 2002թ. մինչ օրս օգտագործում է որպես իր սեփական գույք, քանի որ այն ձեռք է բերել պայմանագրով և դրա փոխարեն Սպիտակի քաղաքապետարանին է հանձնել իրեն պատկանող 240 քմ մակերեսով խանութ-տաղավարը:

Նշված տարածքի նկատմամբ հայցվորի բարեխիղճ տիրապետման փաստը հիմնավորվում է այն հանգամանքով, որ նա այն ձեռք է բերել պայմանագրով և դրա փոխարեն Սպիտակի քաղաքապետարանին է հանձնել իրեն պատկանող 240 քմ մակերեսով խանութ-տաղավարը:

Նշված տարածքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի գրանցումից առաջ և հետո, այդ տարածքի տիրապետման և օգտագործման ընթացքում, ինչպես Սպիտակ համայնքը, այնպես էլ ՀՀ պետական որևէ մարմին, այդ գույքի պաշտպանությանն ու պահպանությանն ուղղված որևէ գործողություն չեն կատարել և երբևէ որևէ կերպ չեն խոչընդոտել հայցվորի կողմից այդ գույքի տիրապետմանը և օգտագործմանը, ինչի հետևանքով հայցվորի մոտ ակնհայտորեն ձևավորվել է այն համոզմունքը, որ այդ գույքի ճակատագրով հետաքրքրված անձինք իսպառ բացակայում են: Այդ գույքը հայցվորի տիրապետմանն է անցել առանց որևէ բռնության գործադրման:

Պատասխանողի և երրորդ անձի անգործությունը և այդ տարածքի տիրապետումից, օգտագործումից մեկուսացվածությունը՝ առանց դրա նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության, իրենց վարքագծով այդ տարածքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելուն ուղղված գործողությունները և պայմանագրով գույքը ձեռք բերելու փաստը, հայցվորին հիմք են տվել ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետում է որպես սեփականություն: Նշված տարածքը հայցվորը տիրապետել է որպես իր սեփականը:

Հայցվորի կողմից նշված գույքի փաստացի տիրապետման համար սահմանված 10 տարվա և անընդմեջության պայմանների պահպանվածությունը, ինչպես նաև տիրապետման բացահայտությունը հիմնավորվում են համայնքի հետ կնքված վերոնշյալ պայմանագրով, տիրապետման մասին համայնքի ղեկավարության, ՀՀ պետական մարմինների և բնակիչների իրազեկվածությամբ: Տիրապետումը չի եղել հանրությունից գաղտնի, ինչը հիմնավորվում է հայցվորի գործողություններին համայնքի բնակչության տված սոցիալական գնահատականով:

Նշված հանգամանքները հիմք են տալիս եզրահանգելու, որ նշված տարածքը տիրագուրկ է և դրա փաստացի տիրապետող հայցվորը 10 տարուց ավելի, բարեխղճորեն, բացահայտ, անընդմեջ և որպես սեփական գույք տիրապետել է այդ անշարժ գույքը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի հիմքով ձեռք է բերել դրա նկատմամբ տիրապետման վաղեմությամբ սեփականության ճանաչման իրավունք:

Հիմք ընդունելով վերոգրյալը և վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ, 178-րդ, 187-րդ, 279-րդ և 280-րդ հոդվածներով՝ դատարանին խնդրել է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան հրապարակ, թիվ 2 բազմաբնակարան բնակելի շենքի առաջին հարկում գտնվող 28 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը ճանաչել տիրագուրկ և դրա նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել Մացակ Մուկուչի Մելոյանի սեփականության իրավունքը:

Պատասխանողի դիրքորոշման (առարկության) հակիրճ բովանդակությունը

Պատասխանողի կողմից օրենքով սահմանված ժամկետներում և կարգով հայցադիմումի պատասխան և (կամ) հակընդդեմ հայց սույն գործով չի ներկայացվել, չի ներկայացվել նաև առարկություններ, ապացույցներ:

Երրորդ անձի դիրքորոշման հակիրճ բովանդակությունը

Երրորդ անձի կողմից հայցապահանջի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացվել:

Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը.

1. Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 25.06.2008թ. տրված թիվ 2319915 վկայականի պատճենի համաձայն՝ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան հրապարակ, թիվ 2 բազմաբնակարան բնակելի շենքի նկատմամբ գրանցված է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը:

2. ՀՀ Սպառողական ընկերությունների միության նախագահի կողմից 05.05.2005թ. տրված տեղեկանքի համաձայն՝ Սպանդարյան փողոցի (ներկայումս հրապարակ) վրա գտնվող Սպիտակի շրջկոոպին պատկանող խանութ տաղավարը, որի տարածքը կազմում է 240քմ (երկու հարյուր քառասուն), համաձայն հայկոոպի թիվ 3-38 16.12.1991թ. գրավոր թույլտվության, շրջկոոպի լիազորների ժողովի 1991թ. վաճառվել է

Մացակ Մուկուչի Մելոյանին 860 ռուբ. (ութ հարյուր վաթսուն ռուբ.) գումարով համաձայն իր դիմումի: Գումարը Մացակ Մելոյանի կողմից ամբողջությամբ մուծվել է Սպիտակի շրջկոուպի դրամարկդ:

3. Դրամարկդի մուտքի օրդերի 27.12.1991թ. թիվ 43 անդորրագրի համաձայն՝ Մացակ Մելոյանի կողմից Սպիտակի Շրջկոուպին վճարվել է 860 ռուբլի, հիմքը և նպատակը՝ վաճառք:

4. Սպիտակի քաղաքապետարանի բնակֆոնդի բաժնի վարիչ Հ. Մխիթարյանի և Մացակ Մուկուչի Մելոյանի միջև 22.04.2002թ. կնքվել է պայմանագիր, որի համաձայն՝ Մացակ Մուկուչի Մելոյանին է հատկացվել 28 քմ մակերեսով տարածք Ս. Ավետիսյան հրապարակի վրա կառուցված շենքի ոչ բնակելի տարածքից: Տարածքը հատկացվել է անվճար 240 քմ մակերեսով խանութ տաղավարի իրացման դիմաց: Պայմանագիրը հաստատվել է Սպիտակի քաղաքապետ Հ. Սարգսյանի կողմից /հիմք՝ պայմանագիր/:

5. Սպիտակ համայնքի ղեկավարի 13.10.2022թ. թիվ 034/28-3218 գրության համաձայն՝ ի պատասխան Մացակ Մելոյանի 10.10.2022թ. դիմումի՝ հայտնվել է, որ Սպիտակի համայնքապետարանը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնելու լիազորություն չունի: Միաժամանակ հայտնվել է, որ Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան հրապարակ թիվ 2 հասցեի շենքը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը, իսկ Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները համայնքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող շենքերը և շինությունները տնօրինելու լիազորություն չունեն:

6. Վկա Վահե Վոլոդյայի Ղազարյանը (անձնագիր՝ AP 0522166), նախազգուշացված լինելով սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության մասին, դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ հանդիսանում է հայցվոր Մացակ Մելոյանի հարևանը, սակայն մինչ այդ էլ որպես համաքաղաքացի ճանաչել է վերջինիս: Մինչև Սպիտակի հրապարակի շենքերը կառուցելը՝ 2002թ., Մացակ Մելոյանը այդ տարածքում թիթեյա շինություն ուներ, որի դիմաց վերջինս ստացել է 28քմ տարածք: Մացակ Մելոյանը նշված տարածքը փաստացի տիրապետում է 2003 կամ 2004 թվականից: Տվյալ տարածքն այլ տիրապետող չի ունեցել: Տարածքները բոլորին տրամադրվել են նույն վիճակում՝ առանց հարդարման, հետո փաստացի տիրապետողները կատարել են բարեկարգման աշխատանքներ: Ներկայացնելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 29102018-06-0029 վկայականի պատճենը՝ հայտնել է, որ ինքը հանդիսանում է Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան հրապարակ 2 շենք, 2 հասարակական սպասարկման օբյեկտի սեփականատերը, որը գտնվում է Մացակ Մելոյանի կողմից փաստացի օգտագործվող տարածքի հարևանությամբ: Տարածքը տրամադրելու համար պայմանագրում նշված գումարները վճարվել են քաղաքապետարանին:

7. Վկա Աշոտ Վլադիմիրի Դանիելյանը (վարորդական իրավունքի վկայական՝ RH850497), նախազգուշացված լինելով սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության մասին, դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ հանդիսանում է Սպիտակ քաղաքի հրապարակի ճարտարապետը, հրապարակի շինարարության պահից ճանաչում է Մացակ Մելոյանին, քանի որ

Մացակ Մելոյանն այդ տարածքում ուներ շինություն: Շինարարությունը սկսելուց առաջ հրապարակի տարածքում տեղակայված էին տաղավարներ, և այն անձինք, որոնք այդտեղ գույք ունեին, պայմանգիր էին կնքում քաղաքապետարանի հետ, որպեսզի փոխհատուցում ստանային: Մացակ Մելոյանը հրապարակի տարածքում ուներ շինություն, որն ապամոնտաժվել է և որպես փոխհատուցում վերջինիս տրամադրվել է տարածք, առանց հարդարման աշխատանքների: Տարածքներ կան, որոնք հետագայում սեփականաշնորհվել են: Ինքը ևս այդտեղ տարածք ունի, որի համար վճարել է, իսկ այն անձինք, ովքեր այդտեղ տարածք ունեին, փոխհատուցում էին ստանում տարածքի տեսքով: Մացակ Մելոյանին նշված տարածքը տրամադրվել է 2002 թվականի վերջին կամ 2003 թվականի սկզբին: Բոլոր տարածքները տրամադրվել են առանց ներքին հարդարման:

Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Դատարանը, գործում եղած յուրաքանչյուր ապացույց գնահատելով դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակացության մեջ բավարարության տեսանկյունից, ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու կամ դրանց նշանակության փոփոխման, դադարման կամ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման անհնարինության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տիրագուրկ է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր, կամ որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ տիրագուրկ անշարժ գույքի

նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով (հոդված 187):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չլ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից այդ իրավունքի դադարման միջոց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ծագման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքը անձի փաստացի տիրապետմանը անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի հիման վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:

2. Փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում:

3. Տիրապետումը պետք է լինի տասը տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն:

4. Տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով (*տե՛ս, օրինակ՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններն ընդդեմ Մանվել Մարիբեկյանի և մյուսների թիվ 3-*

1435/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նման իրավահարաբերություններում առավել կարևորվում է ինչպես անշարժ գույքի փաստացի տիրապետողի վերաբերմունքը տիրապետվող գույքի նկատմամբ, այնպես էլ գրանցված սեփականատիրոջ վարքագիծը և վերաբերմունքն այլ անձի կողմից իր սեփականության տիրապետման նկատմամբ:

Ըստ էության օրենքով նախատեսված տասը տարվա ժամանակահատվածն այն սահմանափակ ժամանակահատվածն է, որի ընթացքում անշարժ գույքի սեփականատիրոջ գործողությունները կարող են ազդել գույքի փաստացի տիրապետողի կողմից նրա՝ գույքը որպես սեփական տիրապետելու բարեխղճության վրա, քանի որ այս իրավահարաբերության համար էական է անշարժ գույքի սեփականատիրոջ վերաբերմունքը նման տիրապետման վերաբերյալ, որովհետև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի կիրառման առումով սեփականատիրոջ կողմից գույքի տիրապետման իրավագործության իրականացումն ինքնին բացառում է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչում որևէ սուբյեկտի համար: Նման մեկնաբանությունը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 3-րդ կետի բովանդակությունից:

Անշարժ գույքի գրանցված սեփականության իրավունք ունեցող անձի վարքագիծը և վերաբերմունքն առանց օրենքի և պայմանագրի հիման վրա գույքը փաստացի տիրապետող անձի տիրապետման նկատմամբ էական է դառնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի բովանդակության առումով գնահատական տալու համար, քանի որ հիշատակված հոդվածը որպես սեփականությունից հրաժարվելու հիմք կարևորում է ոչ միայն գրավոր փաստաթղթի առկայությունը, այլ նաև սեփականատիրոջ գործողությունները (անգործությունը):

Անշարժ գույքի գրանցված սեփականատիրոջ կողմից գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված գործողությունները պետք է իրականացվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով նախատեսված ժամկետի ընթացքում: Այս առումով պետք է նշել, որ ժառանգման կարգով իրականացված իրավահաջորդության դեպքում վերոնշյալ ժամկետի ավարտից հետո գույքի նկատմամբ ժառանգների սեփականության իրավունքի ծագումն ինքնուրույն չի վերացնում անշարժ գույքի փաստացի տիրապետողի մոտ առկա տիրապետման բարեխղճությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ծագման համար գույքն այլ անձի անցնելու ձևերը, որոնք էլ պայմանավորում են ձեռք բերողի մոտ բարեխղճության առկայությունը կամ բացակայությունը, տարբեր են: Ինչպես կամահայտնության գրավոր կամ բանավոր ձևերը, այնպես էլ անձի գործողությունները և հավասարապես անգործությունը կարող են վկայել տիրապետման բարեխղճության մասին (տե՛ս, ըստ հայցի *Խոսրովիկ Հովհաննիսյանի և Հասմիկ Պետրոսյանի ընդդեմ Գառնիկ, Արմեն, Հայկազ Հովհաննիսյանների և մյուսների թիվ ԵԱԴԴ/0439/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.11.2013 թվականի որոշումը*):

ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման համար անհրաժեշտ պայմաններից բարեխղճության պայմանի գնահատման առանձնահատկություններին՝ արձանագրելով, որ նման իրավահարաբերություններում առավել կարևորվում է ինչպես անշարժ գույքի փաստացի տիրապետողի վերաբերմունքը տիրապետվող գույքի նկատմամբ, այնպես էլ գրանցված սեփականատիրոջ վարքագիծը և վերաբերմունքն այլ անձի կողմից իր սեփականության տիրապետման նկատմամբ:

Ըստ էության, օրենքով նախատեսված տասը տարվա ժամանակահատվածն այն սահմանափակ ժամանակահատվածն է, որի ընթացքում անշարժ գույքի սեփականատիրոջ գործողությունները կարող են ազդել գույքի փաստացի տիրապետողի կողմից նրա՝ գույքը որպես սեփական տիրապետելու բարեխղճության վրա, քանի որ այս իրավահարաբերության համար էական է անշարժ գույքի սեփականատիրոջ վերաբերմունքը նման տիրապետման վերաբերյալ, որովհետև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի կիրառման առումով սեփականատիրոջ կողմից գույքի տիրապետման իրավագործության իրականացումն ինքնին բացառում է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչում որևէ սուբյեկտի համար: Նման մեկնաբանությունը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 3-րդ կետի բովանդակությունից:

Անշարժ գույքի գրանցված սեփականության իրավունք ունեցող անձի վարքագիծը և վերաբերմունքն առանց օրենքի և պայմանագրի հիման վրա գույքը փաստացի տիրապետող անձի տիրապետման նկատմամբ էական է դառնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի բովանդակության առումով գնահատական տալու համար, քանի որ հիշատակված հոդվածը որպես սեփականությունից հրաժարվելու հիմք կարևորում է ոչ միայն գրավոր փաստաթղթի առկայությունը, այլ նաև սեփականատիրոջ գործողությունները (անգործությունը):

Անշարժ գույքի գրանցված սեփականատիրոջ կողմից գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված գործողությունները պետք է իրականացվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով նախատեսված ժամկետի ընթացքում՝ մինչև գույքի փաստացի տիրապետողի կողմից ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ճանաչման պահանջ ներկայացնելը: (...)
(տե՛ս Օֆիկ Ենոբյանն ընդդեմ Հովակիմ Կարոյանի և Սվետլանա Կիրակոսյանի թիվ ԵՇԴ/0987/02/09 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 05.04.2013թ. որոշումը):

ՀՀ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ծագման համար գույքն այլ անձի անցնելու ձևերը, որոնք էլ պայմանավորում են ձեռք բերողի մոտ բարեխղճության առկայությունը կամ բացակայությունը, տարբեր են: Ինչպես կամահայտնության գրավոր կամ բանավոր ձևերը, այնպես էլ անձի գործողությունները և հավասարապես անգործությունը կարող են վկայել տիրապետման բարեխղճության մասին: ՀՀ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերը շարադրված իրավական դիրքորոշումները, ևս մեկ անգամ ընդգծել է, որ նշված փաստը հավասարապես կարող է հիմնավորվել ինչպես գործում առկա համապատասխան ապացույցներով, այնպես էլ նախկին սեփականատիրոջ վարքագծի

գնահատմամբ: Տվյալ պարագայում պատասխանողների, նաև՝ վերջիններիս իրավանախորդների վարքագիծը, մասնավորապես՝ նրանց կողմից 10 տարուց ավելի Լևոն Մելքոնյանի տիրապետմանը որևէ կերպ չխոչընդոտելը ևս կարող էր ակնհայտ վկայել գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից սեփականատիրոջ մեկուսացման մասին, ինչը, սակայն, անտեսվել է ստորադաս դատարանների կողմից (տե՛ս Լևոն Մելքոնյանն ընդդեմ Արուսյակ, Կարեն, Լևոն, Արմեն Կարապետյանների և Հեղուշ Կարապետյանի իրավահաջորդ Ալբերտ Կարապետյանի թիվ ԵԿԴ/2393/02/12 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 27.11.2015թ. որոշումը):

Սույն գործով ձեռք բերված ապացույցների հիման վրա Դատարանը հաստատված է համարում այն փաստերը, որ սույն գործով հայցվոր Մացակ Մելոյանը 1991թ. Սպիտակի շրջկոտայից հատուցմամբ ձեռք է բերել Սպիտակ քաղաքի Սպանդարյան փողոցի (ներկայումս հրապարակ) վրա գտնվող խանութ տաղավարը, որի տարածքը կազմել է 240քմ: Այնուհետև, Սպիտակի քաղաքապետարանի հետ 22.04.2022թ. կնքված գրավոր պայմանագրի հիման վրա Մացակ Մելոյանին վերը նշված խանութ տաղավարի իրացման դիմաց անվճար հատկացվել է Սպիտակի Ս. Ավետիսյան հրապարակի վրա կառուցված շենքի ոչ բնակելի տարածքից 28 քմ տարածք:

Այսպիսով, վերը նշված գույքը հայցվորի տիրապետմանն է անցել այնպիսի եղանակով, որ հայցվորը ողջամտորեն կարող էր ունենալ այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով և որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:

Վերը նշված տարածքում Մացակ Մելոյանը կատարել է վերանորոգման աշխատանքներ և բացահայտ տիրապետում է այն մինչև օրս՝ ավելի քան 20 տարի:

Վերը նշված փաստերը Դատարանը հաստատված է համարում ՀՀ Սպառողական ընկերությունների միության նախագահի կողմից 05.05.2005թ. տրված տեղեկանքի, դրամարկղի մուտքի օրդերի 27.12.1991թ. թիվ 43 անդորրագրի, Սպիտակի քաղաքապետարանի բնակֆոնդի բաժնի վարիչ Հ. Մխիթարյանի և Մացակ Մուկուչի Մելոյանի միջև 22.04.2002թ. կնքված պայմանագրի, ինչպես նաև վկաների ցուցմունքների հետազոտման և գնահատման հիման վրա:

Միաժամանակ Դատարանը հաստատված է համարում, որ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան հրապարակ, թիվ 2 բազմաբնակարան բնակելի շենքի նկատմամբ 25.06.2008 թվականից գրանցված է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը:

ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշումների լույսի ներքո անդարադատնալով գույքի սեփականատիրոջ վարքագծին՝ Դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարությունը 2008 թվականին սեփականության իրավունք ձեռք բերելով վերը նշված անշարժ գույքի նկատմամբ, շուրջ տասնվեց տարի որևէ կերպ չի խոչընդոտել (ի դեմս իրավասու մարմինների) Մացակ Մելոյանի կողմից իրեն հատկացված գույքի տիրապետմանը և օգտագործմանը: Մացակ Մելոյանը մինչև օրս շարունակում է անխոչընդոտ տիրապետել և օգտագործել իրեն հատկացված տարածքը, ինչը վկայում է գույքի օգտագործումից ու տիրապետումից սեփականատիրոջ մեկուսացման մասին:

Վերոգրյալների հիման վրա Դատարանը հաստատված է համարում Մացակ Մելոյանի կողմից Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան հրապարակի թիվ 2 բազմաբնակարան բնակելի շենքի առաջին հարկում գտնվող 28 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը բարեխղճորեն, բացահայտ և 10 տարուց ավելի անընդմեջ որպես սեփականը տիրապետելու և օգտագործելու փաստը, ուստի Դատարանը գտնում է, որ հայցվորի պահանջն այդ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու մասին, հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերը բաշխելու վերաբերյալ պատճառաբանությունները և եզրահանգումները.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը ներկայացնելիս հայցվորը վճարել է պետական տուրքի գումարը, հայցը ենթակա է բավարարման, հետևաբար պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման նախապես վճարված պետական տուրքի գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ, 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. Հայցը բավարարել:

Ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել Մացակ Մուկուչի Մելոյանի սեփականության իրավունքը Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան հրապարակ, թիվ 2 բազմաբնակարան բնակելի շենքի առաջին հարկում գտնվող 28 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի նկատմամբ:

2. ՀՀ կառավարությունից հօգուտ Մացակ Մուկուչի Մելոյանի բռնագանձել 20,000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ


Ե. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Վճիռը

_____ թվականին մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Ձև 3


Լոռու մարզ Սպիտակ համայնք ք. Սպիտակ Ավետիսյան հրապարակ 2-

Մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր

Մացակ Մելոյան

Դատարանի վճիռ 19.06.2024թ.



1. 3/1-ին հարկ

H=3.50

h=3.30

D=0.10-0.45



Էրազուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ	ԱՐՄԵՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ		
Որակավորման վկայականի համարը	ՈՅՎ 1/2024		
Ստորագրություն	<i>ԱՄԿ</i>		
Իրավաբանական անձի անվանումը	ՍՊԵՏ ԻՍԱԿՅԱՆ ՈՒՐԴԻԿ		
ՀՎՀՀ	66970821		
Ստորագրություն	<i>ԱՄԿ</i>		
ամիս	չափագրության	04.09.2024թ.	Կ.Տ.
ամսաթիվ	հատակագծի կազմման	05.09.2024թ.	

